Գլխավոր տեղեկություն	
Համար	N 477-Ա
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Ինկորպորացիա (31.12.2009-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Չի հրապարակվել պաշտոնական պարբերականում
Ընդունող մարմին	ՀՀ վարչապետ
Ընդունման ամսաթիվ	12.06.2009
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	12.06.2009
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	13.06.2009

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2009 թվականի N 477-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՏՈՒԿ ՄԱՍԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրով հաստատված կարգի 121-րդ կետի 2-րդ ենթակետով և ելնելով Հայաստանի Հանրապետության միասնական հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագծի քննարկման անհրաժեշտությունից՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության միասնական հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագծի քննարկման աշխատանքային խումբ:

2. Հաստատել՝

ա. աշխատանքային խմբի անհատական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի,

բ. Հայաստանի Հանրապետության միասնական հարկային օրենսգրքի հատուկ մասի նախագծին առնչվող առավել սկզբունքային որոշ հարցերի քննարկման ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի:

(2-րդ կետը խմբ. 30.12.09 N 1090-Ա)

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Տ. Սարգսյան**

2009 թ. հունիսի 12
Երևան

Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2009 թ.
հունիսի 12-ի N 477-Ա որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՏՈՒԿ ՄԱՍԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Ս. Կարայան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (աշխատանքային խմբի ղեկավար)

Գ. Մալխասյան - ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ

Կ. Մինասյան -ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ

Տ. Բարսեղյան - ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

Ա. Օսիկյան - ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

Վ. Դանիելյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Վ. Միրումյան - ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական եկամուտների քաղաքականության վարչության պետ

Հ. Դավթյան - ՀՀ ֆինանսների նախարարի խորհրդական

Կ. Բեգլարյան - ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման և հարկման ընթացակարգերի վարչության պետ

Ա. Պողոսյան - ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի հարկերի մեթոդաբանության բաժնի պետ

Ա. Մանուկյան - ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային հաշվառման և հսկողության ընթացակարգերի բաժնի պետ

(Հավելվածը խմբ., լրաց. 30.12.09 N 1090-Ա)

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2009 թ.
հունիսի 12-ի N 477-Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՏՈՒԿ ՄԱՍԻ ՆԱԽԱԳԾԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՌԱՎԵԼ ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ

NN ը/կ	Քննարկվելիք հարցի բովանդակությունը	Պատասխանատու մարմինները և ներկայացուցիչները	Քննարկման ժամկետը
1	2	3	4
1.	Ավելացված արժեքի հարկով չհարկվող նվազագույն շեմի իջեցման հարցի քննարկում	աշխատանքային խումբ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Վ. Բոստանջյան Ա. Նռանյան	2010 թ. հունվարին կայանալիք ԵՎԲԱԽ-ի առաջին նիստ
2.	Ավելացված արժեքի հարկի գծով գործող արտոնությունների կրճատման և հարկման բազայի ընդլայնման հարցերի քննարկում	աշխատանքային խումբ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Վ. Բոստանջյան Ա. Նռանյան	նախորդ նիստին հաջորդող ԵՎԲԱԽ-ի նիստ
3.	Ավելացված արժեքի հարկի հաշվարկման հաշվեգրման սկզբունքի՝ ամբողջությամբ ներդրման հարցի քննարկում	աշխատանքային խումբ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Վ. Բոստանջյան Ա. Նռանյան	նախորդ նիստին հաջորդող ԵՎԲԱԽ-ի նիստ
4.	Շահութահարկով հարկման	աշխատանքային	նախորդ

	նպատակով հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետների ընդլայնման հարցի քննարկում	խումբ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Վ. Բոստանջյան Ա. Նռանյան	նիստին հաջորդող ԵՎԲԱԽ-ի նիստ
5.	Նվազագույն շահութահարկի վերացման հարցի քննարկում	աշխատանքային խումբ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Վ. Բոստանջյան Ա. Նռանյան	նախորդ նիստին հաջորդող ԵՎԲԱԽ-ի նիստ
6.	2012 թվականից գյուղատնտեսության ոլորտի շահութահարկի արտոնության վերացման հարցի քննարկում	աշխատանքային խումբ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Վ. Բոստանջյան Ա. Նռանյան	նախորդ նիստին հաջորդող ԵՎԲԱԽ-ի նիստ
7.	Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ցանկի ընդլայնման հարցի քննարկում (մասնավորապես, 3 մլն դրամից ավելի մաքսային արժեք ունեցող թեթև մարդատար ավտոմեքենաները և շարժիչային յուղերն ակցիզային հարկով հարկելու հարցի քննարկում)	աշխատանքային խումբ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Վ. Բոստանջյան Ա. Նռանյան	նախորդ նիստին հաջորդող ԵՎԲԱԽ-ի նիստ
8.	Ներմուծվող և տեղական արտադրության ապրանքատեսակների համար ակցիզային հարկի միևնույն դրույքաչափերի սահմանման և ակցիզային հարկի դրույքաչափերը մինչև 50 տոկոսով բարձրացնելու հարցերի քննարկում	աշխատանքային խումբ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Վ. Բոստանջյան Ա. Նռանյան	նախորդ նիստին հաջորդող ԵՎԲԱԽ-ի նիստ
9.	2013 թվականից հաստատագրված վճարների համակարգի վերացման հարցի քննարկում	աշխատանքային խումբ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Վ. Բոստանջյան Ա. Նռանյան	նախորդ նիստին հաջորդող ԵՎԲԱԽ-ի նիստ
10.	Ավելացված արժեքի հարկի և շահութահարկի դրույքաչափերի վերանայման և դրա հետ կապված ընդհանուր նշանակության այլ հարցերի քննարկում	աշխատանքային խումբ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Վ. Բոստանջյան Ա. Նռանյան	ԵՎԲԱԽ-ի առանձին նիստ

(Հավելվածը լրաց. 30.12.09 N 1090-Ա)

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար **Դ. Սարգսյան**